Տեառնընդառաջին ընդ Յայտնութեան. և ոչ յընդունելն Երուսաղէմացւոց, զորօք թագաւորին սաստիկ նեղութիւնս սպառնային առնել։ Իսկ սուրբ Աստուածածինն երևեալ 'ի սեանն՝ որ 'ի սուրբ Յարութիւնն՝ ջուր բղխեցոյց և բազում բժշկութիւնս եղև այնուիկ, և յամօթ եղեն և գնացին։ Սա շինեաց զսուրբն Սոփիա 'ի Պատմոյլ։ Մեռաւ և թաղեցաւ 'ի նոյն եկեղեցին։ Ամանք էր որդի՝ ասեն՝ զսա Ն'ուստինոսի։

Ն'ուստինոս երրորդ սկսաւ յամի Տեառն Շ.ԿԳ. ինքնակալեալ ամս ԺԲ. ուղղափառ հաւատով շինող եկեղեցեաց և ամենայն աշխարհի ընդարձակող խաղաղութեան. բայց կին նորա չար էր և ինքն երկաբնակ։

Տիբերիոս սկսաւ յամի Տեառն Լ.ՉԲ. ինքնակալեալ ամս Ը. ողորմած և աղքատասէր, մինչ զի ոչինչ մնաց 'ի գանձս իւր։

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան